

ծուլ մը այս զանգուածներուն կեդրոնէն մաս մը կարագ հանել, և վարի ծայրին համեառնուլ :

Երբեմն ալ կը խարդախուի կարագը մէջը եփած ու ծեծած և մետաղէ մաշէ անցած գետնախնձոր խառնելով : Եւ ալ ճանչնալն ամենագիւրին է . բաւական է առնուլ մաս մը այս կարագէն և պզտի սկուտեղով կամ մէկ ծայրը գոց ապակիէ խողովակով տաքցընել 50° գաղջ ջրոյ մէջ քիչ մը ժամանակ . կարագը բոլորովին կը հալի . և շուտ մը անօթին յատակը կ'իջնէ գետնախնձորին հոյզը , ինչպէս որ և իցէ օտար գոյացութիւն որ խառնուրդին մէջ կը գտուի և հալած պարարտ նիւթէն աւելի ծանր է :

Ենթին յատակն իջած գետնախնձորին մասը գաղափար մը կրնայ տալ թէ ինչ համեմատութեամբ է խառնուրդը , զոր դիւրին է ճիշդ գտնել , եթէ հալած կարագն երեսէն առնուի և դիրտը ռետնի եղին մէջ հարուի , որ կարագը կը լուծէ և զուտ գետնախնձորը կը թողու , ու մզանքի մը վրայէն ժողվելով գետնախնձորին մասը , վասն զի ռետնի եղը դիւրաւ մզանքէն կ'անցնի տանելով հետը հալած կարագը :

Եւ աւելի պարզ կերպով կրնայ բաժնուիլ կարագէն ծանր նիւթերը . և առ այս պէտք է հալեցընել կարագը 50° գաղջ ջրոյ մէջ շարունակելով իբր ժամ մը , ու ետքէն թողուլ հանգիստ որ պազի : Երանր նիւթերը ջրոյն յատակն իջնելով դիւրին է ճանչնալ զանոնք , և կարագին կորսնցուցած ծանրութեանէն կ'իմացուի թէ խառնուրդն ինչ համեմատութեամբ օտար նիւթեր կը բովանդակէ :

Երբնպիսի հնարքներով կրնայ իմացուիլ թէ արդեօք այսպիսի օտար նիւթեր խառնուած են խողի գիրուցին կամ ուտելի ուրիշ որ և իցէ պարարտ գոյացութեանց մէջ :

ԲՆԱԿԱՆՔ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Մարդկային հրէշաւորութիւնք :

Հրէշ կ'ըսուին այն գործարանաւոր երեւակայական էակներն , որ իրենց կազմութեամբ կը հեռանան գործարանաւորութեան հասարակ օրէնքներէն , հաղորդ ըլլալով միանգամայն մարդու և կենդանւոյ : Հիներն անգէտ բնութեան օրինացն ու վառվռուն երեւակայութեամբ զգածեալ , բազմութիւն հրէշներու ստեղծեցին , որոնք այլ և այլ սեռի կենդանեաց զուգաւորութեանէն ծնուցին : Եւսպիսիք էին , օրինակի համար , հարպեայք , ձիացուլք , սփինքսք , գորգոնայք , Սկիլլա , փաւոնայք , այծամարդք , սիրենայք և ասոնց նման ցուցանքաւոր էակներ , որոնք միայն հին բանաստեղծից երեւակայութեանը մէջ գոյութիւն առին . վասն զի բնութիւնն հաստատուն օրէնք մը ունի , որով այլ և այլ սեռի կենդանեաց զուգաւորութիւնն անբեղմնաւոր կը մնայ , և կենդանեաց այլ և այլ դասուն և այլ և այլ սեռին նախնական տիպն անփոփոխ կը տեսնուի դարերէ ետքն ալ . ինչպէս բոյսերն՝ որ միշտ նոյն ձեւով կ'արտադրին , վասն զի տարբեր ցեղի բուսոց իրարու հետ պատուաստն անկարելի է . ինչպէս հանքերն որ միշտ նոյն ձեւով կը բիւրեղանան : Եւ թէ պէտ գործարանաւորեալ էակաց նախնական տիպն անփոփոխ կը պահուի այլ և այլ սեռից վրայ , բայց կազմութեան աւելի կամ նուազ զարտուղութիւններ կը տեսնուին անհատից վրայ , որոնցմէ առաջ կու գան հրէշաւորութիւնք , և որ էակներն որ կազմութեան այս գործարանական թերութիւնն ունին՝ հրէշ կ'ըսուին : Եւսու տեսութիւն հրէշաւորութեան սահմանը շատ կ'անձկանայ , քան զոր կ'ընծայէին հին ա-

տենն ու միջին դարու մէջ, և կը մտնէ դարձեալ բնութենէ տրուած ճշմարիտ սահմանին մէջ: Ուրեմն բացարձակապէս անտեղի է և առասպել այնպիսի անհատից գոյութիւնն, որ մաս մը մարդոյ ունենայ և մաս մը ուրիշ կենդանոյ: Ինչպէս, օրինակի համար, շան գլուխ, կամ կապկի, կամ գորտի, և կամ այծու սրունք, ձկան թեփով պատած մարմին, և ուրիշ սոյնպիսի հրէշաւորութիւնք: Այս կարծեցեալ հրէշներն, զոր ոմանք կը հաստատեն թէ աչքով տեսած ըլլան, ուրիշ բան չեն, բայց եթէ այնպիսի անհատներ, որոնք թերակատար ձևեր ուներ են կամ հիւանդութեամբ զգածեալ են: Յայտնի է թէ գծագրութե փոքրագոյն խոտորմունքներն այնպիսի կրնան ըլլալ, որ մարդս այս կամայն կենդանւոյն նմանցընեն: Իսկ մնացածն, որ այս նմանութիւնը կատարեալ ըլլայ, տաք երեւակայութիւնն ու բանաստեղծական աշխոյժը կը լրացընեն: Ի վերայ այս ամենայնի հրէշներն իրօք կան, և բնութաստութեան հեղինակներն անոնց այլ և այլ դասաւորութիւններ կու տան, որպէս զի կարող ըլլան զանոնք կարգաւ մը քննելու: Այս հեղինակաց առաջարկած հրէշից այլ և այլ դասաւորութեանն մենք հոս Պիւֆֆոնի տուածը կ'ընտրենք քիչ մը զանազանութե, վասն զի աւելի դիւրին կ'երևայ, և ամէն հրէշաւորութիւններն երեք դաս կը բաժնենք. Ա. Հրէշք ըստ առաւելութեան, այսինքն երկու կամ շատ անհատից 'ի մի միաւորութիւն, և կամ անդամ մը ու փորոտիք մը աւելի ունին: Բ. Հրէշք ըստ նուազութեան, այսինքն է որոնց մէկ կամ շատ մասը մարմնոյ կը սլակսին: Գ. Հրէշք ըստ տեղափոխութեան գործարանաց:

Հրէշք ըստ առաւելութեան: — Այս դասուս կը վերաբերին այն հրէշներն, որ երկու կամ երեք անհատք մէկմէկու վրայ պատուաստուած կ'ըլլան, կամ շատ մասունք իրարու ձուլուած կ'ունենան, նոյնպէս նաև մէկ անհատին վրայ սովորականէն մէկ կամ երկու գոր-

ծարան աւելի կ'ըլլայ: Ինչպէս, օրինակի համար, քսանըհինգ ողինք կամ կողք, բազմութիւն ատամունք, ջիգք, մատունք, և այլն: Այս զարտուղութիւններս, որ յաճախ կը գտուին բնական ցեղապետութեան մէջ, ոչինչ նուազ կենդանեաց վրայ ալ կը տեսնուին, և աւելի սակաւագիւտ են մարդկանց վրայ:

Սակայն մարդկային ցեղն ալ բազմութիւն օրինակներ կը մատուցանէ այս բանիս, արժանի մտադրութեան իմաստասիրին: Մենք յիշենք հոս միայն երևեալագոյնները:

Այսթեր և Յուդիթ անուամբ երկուորեակներն, որ Ունկարիա ծնան, երիցու մը ձեռք քնուեցան և Ռեդրպուրկ վանք մը դրուեցան կրթութեան, ուր մնացին ինչուանքսան տարի: Սիայն ստորին կողմանէ իրարու կպած ըլլալով, իրենց մարմնոյն միւս ամէն մասերն ալ բոլորովին ազատ էին: Յուդիթ վեց տարուան հիւանդ ինկաւ, և անդամալոյծ մնաց, ընդհակառակն Այսթեր մեծցաւ և վայելուչ ու ուրախ զուարթ էր: Արքունքի նշաններն երկու քերց վրայ ալ մի և նոյն ժամանակ կը տեսնուեցան, և երբ Յուդիթ քըսանուերկու տարուան եղաւ, սաստիկ ջերմամբ մեռաւ: Իսեղճ Այսթերն ալ հարկադրուեցաւ իր անմեկին քրոջն ու ընկերոջը ետեւէն երթալ, և երեք ժամ Յուդիթի մահուընէն ետքը ինքն ալ մեռաւ:

Ալ էրոէօնի լրագիրը, յամին 1709, ասոր նման օրինակ մը կը յիշատակէ: Արկուորեակ քուրեր իրարու կպած էին միջայ կողմանէ. բայց երկուքն ալ բարեբարոյ էին, զուարթ ու սիրելի. ասոնց իմացականութիւնը զարմանալի էր, եօթն ամաց քանի մը լեզու կը խօսէին: Այսինս որ նոյն ժամանակին հեղինակներն ասոնց սլատմութիւնը չեն շարունակած:

Իւնսդէր, Այսթերի ժամանակակից, երկու սղտիկ աղջկանց ստորագրութիւնը կու տայ, որ Ա որմնի շրջակայքը ծներ էին, և ճակատներէն

մէկմէկու կպած : Սիւլթեան կէտն հազիւ թէ դահեկանի մը մեծութեան կը հաւասարէր : Երեսնամե մէկը մեռնելով՝ ուզեցին բաժնել մէկաւն ազատելու համար . բայց վրան հիւծութեան հիւանդութիւն մը եկաւ և շատ չանցաւ քրոջը ետեւէն ինքն ալ գերեզման գնաց :

Ենթեալ դարուն վերջերը Վաղղիոյ Ռուսիաբաւարանը երկու քորքկային որ ճկոյթ մատովն իրարու հետ միացած էին : Եւսն հիւանդութենէ ազատ ինչուան յիսուն տարի ապրեցան , և նոյն ժամանակը անոնցմէ մէկն հիւանդանալով՝ անկողին ինկաւ ու մեռաւ : Եւսն ուրիշ մատը բաժնեցին կենդանիէն . բայց այս բաժանմամբ երկրորդ քորքը շատ չապրեցաւ , որ շուտ մը սկսաւ հիւծիլ ու քրոջը քով թաղուեցաւ :

Սիւլթեանի երկու եղբարքն , որ քանի մը տարի առաջ բոլոր Եւրոպա պտրտեցան , մէկմէկու միացած էին սպիտակ գծով մը , ստամոքսին խոռոչէն սկսեալ ինչուան պորտը : Երեսն քանական գործարանաւորութիւնը բաւական գեղեցիկ էր , և իմացականութիւնն ըստ բաւականին զարգացած : Ինչպէտ և երկու անձն էին , բայց իրենց կարողութիւններն այնպէս կատարեալ կերպով մէկմէկու համաձայն էին , որ կարծուէր թէ մի և նոյն կամքն ունէին :

Եւրոպայի ճարտար անդամահատուներ առաջարկեցին զասոնք իրարմէ բաժնելու , զիրենք միացնող մսի շերտը կտրելով , բայց այն երկու եղբարքն յանձն չառին :

Երկնակ հրէշ մը , կամ լաւ ևս ասել երկուորեակ եղբարք գագաթներէն իրարու կպած , ծնան քսանչորս տարուան մօրէ մը , որ արդէն մայր եղեր էր երկու կայտաւ և բարեկազմ զաւակաց : Եւսն երկուորեկաց միաւորութիւնը գանկին վերին մասէն էր , գրեթէ խուն մորթը խիտ և բարակ գեղմամբ պատած էր : Եւրկու դէմքերն բարեձեւ էին , մէկը վեր դարձած՝ մէկալը վար , և ամենեկին իրարու նմանութիւն մը չունէին , ու երկուքին մարմինն ալ բոլոր

բովմն բարեկազմէին : Եւսն հրէշ քանի մը ամիս ապրեցաւ :

Եւսնի տարեգրացը մէջ հետեալ տեղեկութիւնը կը կարդացուի .

“ Եւսնի ինքնագիր մը կայ քսանուերկու տարուան , որ կրծոյն առաջակողման վրայ անգլուխ սաղմն մը կը կրէ , բարեձեւ կազմութեամբ , որ ինչուան ծնկուրները կը հասնի : Եւսն մարդկեղէն պզտի մարմինը , որ գլուխ չունի և ինչուան սեռէն է , սուր զգացողութիւն մը ունի , և թէթեւ մըն ալ դաշելով կը գալարի : Եւսնի կը զգայ սաղմին վրայ տրուած քսմթը , և թէ որ սաստիկ ըլլայ՝ մեծաձայն կը պուպայ : Եւսն հրէշ դեռ կենդանի է Եւսնի , և չուզեց Եւրոպա գալ , թէպէտ և իրեն շատ բան խոստացաւ անգղիացի բժիշկ մը , ” :

Եւսնի Վեթիկոյն գիտնականն ալ սոյնպիսի հրէշաւորութեան մը պատմութիւնը կ'աւանդէ , որ ոչինչ նուազ նշանաւոր է : Եւսն հրէշ , որ այն ատենն երեսուն տարուան էր , և զոր ինքն ամենայն մտադրութեամբ քննէր էր , կրծոցը վրայ կպած , ստինքներէն վար՝ անգլուխ սաղմն մը կը կրէր , բարեձեւ կազմութեամբ , որուն գիրուկ անդամները մկանական ձգտումն մը ունէին , ամենեկին անկախ առաջնոյն կամքէն որուն վրայ պատուաստուած էր : Եւսն համար երբ կը խողովէին սաղմին ոտքին տակը , իր պզտի սրունքները սաստիկ կը շարժէր . և թէ որ քիչ մը ամուր քսմթէին , կից կը նետէր և ոտուրները թօթափելով կ'իմացնէր ըզգացած ցաւն , անհամբերութիւնն ու բարկութիւնը :

Եւսնին Սիւլթեան , անդամաւնին ժամանակակից Վոսիւէի , մարդկային հրէշաւորութեանց մէջ կը յիշատակէ նաև տասուերկու տարուան աղջիկ մը , մեծղի և աւելի քան զհասակը զարգացած , որ ձախ կուշտէն ուրիշ պզտիկ աղջկան մը մարմինը կը կրէր , և ինչուան ուսերէն վար իր մարմնոյն մէջ ընկղմած էր : Եւսն պզտիկ մարմնոյն անդամները խոշոր էին , գէր , և իրենց

ծանրութեամբը նեղութիւն կը պատ-
ճառէին : Արկուքն ալ մէկ զգացողու-
թիւն ունէին , թեթեմ մը դպչելով
պզտիկ մարմնոյն , մէկէն միւսը կը զգար :
Բայտ հրէշ տասուիրեք տարուան մե-
ռաւ :

Նոյն հեղինակն Նտալիա տեսաւ ու թ-
տարուան տղայ մը , որուն երրորդ կողմ-
ը վարէն գլուխ մը կը տեսնուէր բա-
րեձե կազմութեամբ , որ աչուրները
կը գոցէր ու կը բանար , և ուրախու-
թեան ու տրտմութեան նշան կու տար :
Բմենէին նման էր , կ'ըսէ , տղու մը որ
առաջնոյն մարմնոյն մէջ պահուրտած ,
ու կուրծքը պատուելով գլուխը դուրս կը
հանէ , և իբր թէ պատուհանէ մը կը
նայի : Բայտ երկու գլուխներէն իւրա-
քանչիւրն ալ կնքուեցան՝ մէկն Յակոբ
ու մէկալը Սատթէոս անուամբ : Ար-
կուքն ալ մի և նոյն զգացողութիւնն ու-
նէին . վասն զի Յակոբ կոչուած գըլ-
խուն ականջը սխմելով՝ Սատթէոսը կը
պոռար :

Երոնց նման ուրիշ շատ օրինակներ
ալ դեռ կրնայինք յիշատակել հոս , բայց
համառօտութեան համար մէկդի թող-
լով՝ անցնինք երկգլուխ հրէշներու :

Երոնք կը բաժնուին այնպիսի հրէշ-
ներու , որ երկու գլուխ ունին և մի միայն
բուն . և հրէշներու՝ որ երկու գլուխ ու-
նին և երկու բուն , երկու , երեք կամ
չորս ձեռք ու երկու սրունք միայն :

Յամին 1775 , Սպանիա աղջիկ մը
ծնաւ որ երկու գլուխ ունէր , և եր-
կուքն ալ մէկմէկու ձուլուած , նման
Յանոս չաստուծոյն գլխոյն : Սայրն
երկուքին ալ կաթ կու տար առան-
ձինն , և իւրաքանչիւրն ալ իրեն լացն
ունէր : Արովհետեւ ասոնք մէկ մարսո-
ղական խողովակ մը ունէին , ուստի
երբոր ստամոքսը կուշտ ըլլար՝ երկու
բերաններն ալ մէկտեղ մօրերնուն ըս-
տինքը կը մերժէին :

Բայտ հրէշ , որ աշխարհիս վրայ քիչ
անգամ նմանն ունեցեր է , քաղքէ քա-
ղաք շրջեցուցին շատ տարի և ստրկով
հասարակաց ցուցուցին :

Ս իրաբուժութեան հին վարժարանն

իր տարեգրացը մէջ հետեւեալ երկու
հրէշաւորութիւնները կը յիշատակէ :

“ Հրէշ մը , որ երկու ծոծրակ ունէր ,
մէկ դէմք մը , երկու աչք , երկու ա-
կանջ , մէկ բերան , մէկ որկոր , երկու
ստամոքս , և բարեկազմ չորս թեւ , չորս
սրունք : Այսուանկութիւնն ինչուան մի-
ջին գիծը կը հասնէր , գլխէն սկսեալ
մինչև վերնորովայնը , իսկ մարմնոյն
մնացած մասերը բոլորովին բաժնուած
էին ” :

“ Արկու աղջիկ տղայք , որ միացած
էին իրարու հետ կրծոց մէկ կողմանէ
ինչուան պորտը : Արկու թեւերն ա-
զատ էին , միւս երկուքը մէկմէկու ձու-
լուած ինչուան դաստակը , որուն ծայրն
երկու ձեռք կը վերջանար , իւրաքան-
չիւրը չորս մատով ձեւացած , ու մէկ
բութ մը ունէին հասարակաց . որոշ կը
տեսնուէր որ այս բութն երկու բու-
թաց միաւորութեանէ առաջ եկած էր ,
այնպէս որ կրնար ըսուիլ թէ այս հրէշս
չորս ձեռք ունէր և երեք թեւ ” :

Պուքանան անգղիացի բանաստեղծը
նշանաւոր երկգլխի հրէշի մը պատմու-
թիւնը կ'աւանդէ , զոր ժամանակին
գիտնականներն ալ կը հաստատեն :

“ Յակոբ Դն թագաւորութեան
սկիզբը , կ'ըսէ , Սկովտիա հրէշ մը
ծնաւ , որ երկու գլուխ ունէր , երկու
կուրծք , չորս թեւ , մէկ փոր , և երկու
սրունք . կուրծքերն իրարու հետ պոր-
տէն վեր կը միանային : Թագաւորին
հրամանաւ՝ ամենայն ինամբով անա-
յոս հրէշը , շատ լեզուներ սորվեցաւ ,
զորոնք ամենայն դիւրութեամբ կը խօ-
սէր : Արկու գլուխները շատ անգամ
իրարու հակառակ կամք ունէին , և այս
տարածայնութիւններէս մէջերնին շատ
անգամ վէճ կը ծագէր : Բայտ հրէշս ,
որուն վրայ շատ կարեւոր քննութիւններ
եղան թէ բնախօսական և թէ հոգե-
բանական , ինչուան քսանըութ տարի
ապրեցաւ ” : Նոյն ժամանակի աւելոր-
դապաշտութեանց պատճառաւ անկա-
րելի եղաւ այս հրէշիս մարմնոյն վրայ
անդամազննական դիտողութիւններ ը-
լուիլ :

Ընդդիմ իմաստասիրական իրաւախոհութեան¹ մէջ կարգէ դուրս երկգլխի հրէշի մը պատմութիւնը կը կարգացուի, Պենկալա ծնած, որ ինչուան չորս տարի ապրեցաւ, և թունաւոր օձէ մը վիրաւորուելով մեռաւ։ Երկու գլուխներն իրարու հետ լաւ մը կցուած էին, երկրորդ գլուխը կը վիզ մը ունէր։ Եւս գլուխը սաստիկ զգայուն էր, և մէկալին ունեցած ուրախութեւր կամ տրտմութեանն ինքն ալ հաղորդ էր։ Երբ առաջին գլուխը կաթ կամ արգանակ կ'ուտէր, երկրորդին բերնէն լորձուք կու գար, իբր թէ բերնին ջրերը վազէր։ Եւս անգամ առաջնոյն քնաւ նալու ժամանակն երկրորդն արթուն կը կենար. և երբ անիկայ աչուրները կը բանար, ինքը կը գոցէր, իբր թէ իր կարգն եկած ըլլայ քնանալու։

Եւանաւոր երկգլխի հրէշ մըն ալ Սարդինիա ծնաւ, ու 1828 տարւոյն վերջերը Բարիզ մեռաւ։ Երկայ երկու գլուխ ունէր, երկու կուրծք, չորս թև, մէկ ստորորովայն և չորս սրունք։ Երկու իրաններն մէկմէկու հետ ձուլուած էին պորտին բարձրութենէն, և մէկուն անունն էր Հօրդա ու մէկալինը Վրիստինէ։ Սէկուն մեռնելով շուտ մը երկրորդն ալ մեռաւ։ Եւս Փրուա Սենդ-Լէր այս հրէշիս վրայ անգամազննական դիտողութիւններ ընելով, տեսաւ որ երկու սիրտ ունէր մի և նոյն պատատի մը մէջ, մէկ լեարդ մը, մարսողական կրկին խողովակ, որ ինչուան կուրաղեաց² կը հասնի, երկու արգանդ և մէկ անցք արգանդի, երկու ողնայարներն իրարու հետ կը միանային իրենց վարի ծայրէն, մէկ ստոծանի։

Յամին 1475, Պալ հրէշ մը ծնաւ քառտանի կամ չորս սրնքաւոր, որ տասնըհինգ տարի ապրեցաւ և դիպուածէ մը մեռաւ։ Երկայ մէկ գլուխ ունէր, մէկ կուրծք, մէկ պորտ և երկու թև, կրկնակութիւնն երանքէն վեր կը սկսէր։ Եւս գէր ու աճառա-

պատ սրունք ունէր, տեղափոխութեան շարժումը ամենայն դիւրութեամբ կը կատարէր սրունից թէ մէկ զուգովը և թէ միւս զուգովը։

Հրէշաւորութիւն մըն ալ կայ, որ Ռեծագլխաւի¹ կ'ըսուի, և մեր կլիմայից տակը սակաւագիւտ է։ Բժշկականութեան մեծ բաւագրոց մէջ շատ դիտողութիւններ կան մեծագլուխութեան նկատմամբ, որոնցմէ հետեւեալ երկուքն յիշենք։

«Պորկինի մէկն, 'ի Սարսիլիա ծնած, յիսուն տարուան մեռաւ, և չորս ոտք հասակ ունէր։ Իսկ գլուխն երեք ոտք շրջապատ ունէր, և մէկ ոտք բարձրութիւն։ Երբ քսանուերկու տարուան եղաւ, հարկադրուեցաւ ուսերուն վրայ երկու խոշոր բարձեր հաստատել գլուխը կառավարելու համար, վասն զի չէր կրնար հաւասարակշիւ բռնել զայն»։

«Եւանութ բնազնին մը, որ նորերս Ղաւնուզէն դարձեր էր, կը պատմէ թէ մաւրիտանացի մը տեսեր է երեսուն տարուան, միջահասակ, և ուսոյր վրայ խոշոր կըր դդումէ մը մեծ գլուխ մը կը կրէր, այնպէս որ երբ անէն դուրս կ'ելլէր՝ բոլոր ժողովուրդը վրան կը թափէր զինքը տեսնելու համար։ Եւս 'ի ասկէ, քիթ մը ունէր հինգ բթաչափ երկայն, որ սրինգի մը վարի կողման նման վրանաձև կը բացուէր։ Եւս այնպէս բերանն այնպէս լայն կը բացուէր, որ ձմերուկ մը կեղևովն անոր մէջ կը սըղմէր, ինչպէս հասարակ մարդ մը բերանը ծիրան մը կը սղմեցնէ։ Եւս հետաքրքրական մեծագլուխս, թէպէտ ապուշ, ճարտար հտպիտ էր։

Եղեր են նաև բազմաստին² կանայք, այսինքն երկուքէն աւելի ստինք ունեցող, որ առաւելապէս տաք կլիմայից տակ կը գտուին, քան թէ ցուրտ բարեխառնութեանց տակ։

Պատմութիւնը կ'աւանդէ որ Ելեքսանդրի Սեւերոսի մայրն երեք ստինք ունէր։

¹ Գ.շ. Transactions philosophiques.

² Գ.շ. Cœcum.

¹ Գ.շ. Macrocephalie. ² Գ.շ. Multimamies.

Տիկինն Ս իմ Վրէլցի՝ երեք ստինք
ունէր եռանկիւնի շարուած կուրծքին
վրայ :

Վէորդ Բնէոս մանկամարդ կին մը
կը յիշէ որ երեք ստինք ունէր հորի-
զոնական կարգաւ :

Ինկէոս հռովմայեցի տիկին մը տե-
սեր է , որ չորս ստինք ունէր երկու
կարգ շարուած , մէկը վերին , միւսը
ստորին :

Վարտներ Բարեյուսոյ Վլուխն հընդ-
կուհի մը ճանցեր է , որ հինգ ստինք
ունէր և իւրաքանչիւրը կէս լիտր կաթ
կրնար տալ :

Բերսի իր Յիշապաւադրացը մէջ վա-
րքնապարավաճառ կին մը կը յիշէ , որ
հինգ երկայն ստինք ունէր , չորսը լե-
ցուն , հինգերորդը ցամբած :

Որովհետեւ հոս խօսքն այնպիսի հրէ-
շից վրայ եղաւ , որ աւելի կամ նուազ
երկայն կեանք ունեցեր են , ուստի կը
թողունք այն հրէշներն , որ միագլուխ
են և երկմարմին ու չորս սրնքաւոր ,
ինչպէս նաեւ զանոնք որ բոլորովին ան-
գլուխ են , որոնք ամենեւին կեանք չեն
ունենար :

Հրէշ Ըստ նոսաւորութեան : — Բ. յս եր-
կրորդ դասաւորութեանս տակը կ'իյ-
նան բոլորակնեայք կամ միակնեայք ¹ ,
միոտունք ² , անոտունք ³ , անձեւինք
կամ թեւատք ⁴ , և ընդհանրապէս այն
ամենայն արարածք , որոնց մարմնէն
մաս մը կը պակսի :

Սիակնութիւնն ու միոտնութիւնը
գրեթէ միշտ երկու գործարանաց 'ի մի
միաւորութենէն առաջ կու գայ , վասն
զի անդամազնինը կը գտնէ միշտ ասոնց
բաժանման գիծը :

Իենդանի բոլորակնեայք և միոտունք
շատ սակաւագիւտ են , և ասոնց նկատ-
մամբ եղած պատմութիւններն ամէնն
ալ գրեթէ առասպել են : Ի վերայ այսր
ամենայնի հիներէն մէկը կը պնդէ թէ
ինքը միոտն մարդկանց հետ խօսած ըլ-
լայ , և երբ կ'ուզէին քալել , կ'ըսէ ,

կ'ոստոտէին այնպիսի ճարտարութեւ ,
որ կարծես թէ պողպատի զօրութիւն
ու առաձգութիւն ունէին : Երբ նաեւ
անգլուխ մարդիկներ ալ տեսեր է , ու
ըսնք լայն կուրծք մը ունէին , կ'ըսէ , և
մէջտեղն սպառնալից աչք մը . ուզելով
անոնց հետ խօսիլ , ամենեւին պատաս-
խան չէ առած :

Բարիզու բժշկականութեան դպրո-
ցին թանգարանն հրէշ մը կը պահուի
միակնեայ , գրեթէ քառաձեւնի , որ
քանի մը ամիս ապրեր է : Երբ գլուխն
առիւծու նման էր և մազը շէկ՝ բաշի
նման , և կռնակն ուռեցնէրով՝ ուղտու
նման . իսկ մարմնոյն մնացած մասը կար-
գէ դուրս նմանութիւն ունէր շիմանկ
կապկին :

Բ. յս դասու հրէշից ստորագրութիւ-
նը լմնցընենք Տիւգունէ պատկերա-
հանին վարուց համառօտ պատմութեւ ,
որ իլ քաղաքը ծնաւ յամին 1806 :

Երբ հասակը երեք ոտք և ութ
բութ երկայնութիւն ունէր , գլուխն
ու կուրծքը բարեձև էին , և միջնորդ
թեթեւ մը դէպ 'ի աջ խոտորած էր :
Ոչ թէ ունէր և ոչ դաստակ , իսկ ստո-
րին անդամներն էին երկու ամենակարճ
սրունք , որոնք ծննդեան ժամանակէն
տեղերնէն իրենք իրենցմէ խախտած
ըլլալով՝ ստորորովայնին երկու կողմէն
կախուած էին , և ըստ մեծի մասին ի-
րենց սովորական շարժունութիւնը կո-
րուսած էին : Ստուրները բարեկազմ
էին , և մատուրներն այնպիսի դասա-
ւորութիւն ունէին՝ որ ամենօրեայ կըր-
թութեամբ ձեռքի պաշտօն կը կատա-
րէին :

Իր տղայութենէն Տիւգունէ մեծ
յարմարութիւն ցուցուց ուրուագրու-
թեան , ու ոտուրներովը զարմանալի
ճարտարութեամբ կը կտրէր ու կը պա-
տրաստէր իր կապարագրիչներն ու գրիչ
ները . նոյն ժամանակուան իլ քաղա-
քին պատկերահանութեան Դպրոցին
տեսուչը , որ Ս աղոյ կ'ըսուէր , տեսնե-
լով այս տղուն գծած ուրուագրութիւն-
ները , զինքը քովն առաւ ու սկսաւ դաս
տալ . մանուկն Տիւգունէ քիչ ժամա-

¹ Գ. Կ. Cyclope.

³ Գ. Կ. Anapode.

² Գ. Կ. Monopode.

⁴ Գ. Կ. Anachyre.

նակուան մէջ այնպիսի զարմանալի կերպով առաջ գնաց, որ իր հայրենեաց տարեկան առաջին մրցանակն առաւ : Այս առաջին յաջողութենէս ետեւ Նարիզ գնաց իր ուսմունքը շարունակելու և արուեստը կատարելագործելու համար : Շատ մրցանակներ առաւ, և իր ձեռագործները հասարակաց հանդիսին դրուելով, զինքն իր ժամանակին երևելի երիտասարդ պատկերահանից կարգը դասեցին : Յամին 1832 յանձնուեցաւ իրեն թագաւորին կենդանագիրը նկարելու, իւր քաղաքին ոստիկանութեն համար . երկրորդ տարին ալ նոյնպիսի յանձնարարութիւն մը ունեցաւ Սիսդրոնի փոխօստիկանութեան համար : Երեք տարի մեծ պատկերի մը վրայ աշխատեցաւ, որ կը ներկայացնէր Մագդալենէն Քրիստոսի ոտքը՝ յարութենէն ետեւ, և հասարակաց հանդիսին դրուեցաւ ու ներքին գործոց պաշտօնեայն գնեց զայն :

Տիւգունէի գլխոյն ձեւը շատ նշանաւոր էր, ճակատն ուռուցիկ բարձրացած, աչուրները վառվռուն, խօսակցութիւնն աշխոյժ և փոփոխ . կենդանագրութեան մէջ գերազանց էր, և այս տեսակ նկարչութեամբ շատ անուն հանեց : Իր տղայութեան ժամանակը շատ սէր, շատ հոգ և շատ խնամք տեսաւ մօրմէն, իբր թէ գեղեցիկ ու չնորհալի տղայ մը ըլլայ, ինքն որ բնութեան երեսէն այսպէս ինկած էր . ո՛վ սէր մայրական . և երբ այս ցուցանքաւոր տղան մեծցաւ, սիրտը սուրբ երախտագիտութեամբ վառուած՝ հասոյց լիովին մօրն արդեանցը . իր աշխատանաց պտուղը, մանաւանդ իր որդիական սէրն ու գորովը, անոր ծերութեանը վրայ երջանկութեան ճառագայթ մը սփռեցին :

Արջերս Նարիզ հասարակաց հրապարակներուն վրայ կամ բազմամարդ փողոյներուն գլուխը մարդ մը կը տեսնուի, թեւատ ի ծննդենէ, բայց ոտուրներովն այնպիսի զարմանալի կերպով կը գրէ, կը կարէ, ատրճանակ կը լեցնէ ու կը պարպէ, որ բոլոր բազմութեան մտադրութիւնն իրեն կը ձգէ, ինչ

պէս նաև անոնց ողորմածութիւնը կը շարժէ :

Եւ ոտքովը սագի գրիչ մը բռնած, միւս ոտքովը զմեղինն առած կը կտրէ զայն, և արագ արագ կը գրէ թերթ մը թղթի վրայ . ետքէն գրչի այլ և այլ խաղեր կ'ընէ, այնպէս որ գեղագրութեան վարպետէ մը վար չմնար : Այնքան թել կ'անցընէ զարմանալի արագութեամբ, և այնպէս կանոնաւոր կը կարէ, որ իբր թէ ճարտար դերձակ մը ըլլար : Ետքն ատրճանակով կը զինէ, կը ընու զայն, խանձը կը դնէ ու կրակ կու տայ : Հրահան գործին կը զարնէ, ու ծխափայտը կը վառէ : Այցահան գործին կ'առնու, շիշը կը բանայ, մէջինը գաւաթ մը կը լեցնէ ու կը խմէ յետ հանդիսականաց կենդանութիւն մաղթելու : Ահաւաները կը մաքրէ, կը սանտրուի, վնոցը կը կապէ այնպիսի ճարտարութեամբ՝ որ տեսողաց զարմանքը կը շարժէ : Արիշ ասոնց նման շատ փութեր կ'ընէ, որ աւելորդ է հոս յիշել :

Այս զարմանալի ճարտարութիւնս այնպիսի անդամոյ մը, որ ուրիշ պաշտօնի համար եղած է, կը ցուցնէ որ երկար ու շարունակ կրթութիւնը գործարանին շարժմունքներն ու ձեւը կը փոխէ : Եւ իրօք, այս թշուառիս ոտից մատուրներն աւելի երկայն են և աւելի ճապուկ քան զսովորականն, որով կըրնայ փոխանակել ձեռաց :


Հրէշ ըստ Գեղարդիոս-Բեան գործարանայ : — Այս երրորդ դասաւորութես տակ գնացող հրէշներն աւելի հասարակ են քան զոր կը կարծուի . բայց որովհետեւ այս փոփոխութիւնս ներքին է, աչքի տակ չիյնար, անոր համար քիչ անգամ կը դիտուի :

Նարիզու Վիտութեանց ճեմարանին Յիշատակագիրներն ապիկար զինուոր մը կը յիշեն, եօթանասունուերկու տարուան մեռած, որուն ներքին գործարանները բոլորովին տեղերնին փոխած էին . ըստ բնական կարգի աջակողմեան գործարանները դէպ ի ձախ անցեր էին և ձախակողմեան գործարանները՝ դէպ ի աջ . սոյն այս տեղափոխութիւնն ու

նէին նաև շնչերակներն ու երակները ,
ինչպէս նաև փորոտիքը :
Ուրիշ ասոր նման շատ գիտողութիւն

ներ կան , զորոնք հոս զանց կ'ընենք յի-
շելու և խօսքերնիս կը կնքենք :

ԿԵՆԴԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ



Գոնտումա կենդանին

Չորքոտանեաց մէջ գեղեցիկներէն
մէկն ալ է Գոնտումա ըսուածը , որ Ռա-
բէյուսոյ Վլուխը կը գտնուի , և որուն
վրայօք երկար ատեն շատ քիչ ծանօ-
թութիւն ունէին բնապատումք , բայց
հետզհետէ եղած հաւաստի քննու-
թիւններով բաւականապէս տեղեկա-
ցան , որով մասամբ ստուգուեցան նաև
Պիւֆոնի ըսածները :

Վոնտումայի ընդհանուր տեսքն առ-
նելով՝ եղջերուին կը նմանի , հինգ ու
վեց ոտք երկայնութեամբ , իսկ բար-

ձրութիւնը կրնայ չորսէն ինչուան չորս-
ուկէս ոտք ըլլալ : Ուրիշ արագաշարժ
կենդանեաց նման նուրբ ու թեթեւ է
մարմնով . սրունքները բարակ են ու
ջղոտ , և սևորակ կճղակ մը ունին . իսկ
առջևի սրունքները քիչ մը աւելի եր-
կայն են : Վլուխը միջակ է , ականջնե-
րը երկայն ու լայն , եղջիւրները նորա-
ձև ու զարմանալի . իսկ աչքերը սև ու
վառվռուն են , բայց միանգամայն անանկ
քաղցր հայեցուածք մը ունին , որ եղ-
ջերուաց ցեղին մէջ նշանաւոր եղած է :